Ժողովին մասնակցում էին 25 եպիսկոպոս, շատ սարկաւագներ, կանոնիկոսներ և ուսուցչապետներ, մի խօսքով անգլիական եկեղեցու ամբողջ կազմը։

Համաժողովի ծրագիրը խիստ ընդարձակ էր։ սկըսած գաւանաբանական խնդիրներից մինչև կեանքի ամենահասարակ երևոյթները խնդիրներ էին մատակարարել վիճաբանութեան։ Աչքի առաջ ունենալով Նոր ժողովներին ունկնդիր էին լինում 3000 ժողովուրդ։ չի կարելի ուրանալ այդ ժողովների բարոյական մեծ ազդեցութիւնը։

2. ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայի միացեալ նահանգներում ամենայն տարի աշնանը մի օր յատկացուում է գոհաբանութեան։ Այդ օրը կոչուում է «օր գոհաբանութեան» — Thankzgivingday, որ նախագահի հրովարտակով ամենայն տարի առանձնապէս նշանակում է։ Ահա թէ ի՞նչ է ասում այժմեան նախագահ Կլէվլէնդը իւր այս տարուան հրովարտակում։

«Ամերիկայի ժողովուրդը պարտական է երախտագիտութեամբ գոհութիւն մատուցանել տիեզերքի վերին Տեսչութեան։ Որը անցած տարուան ընթացքում բարի խնամք է ունեցել իւր վերայ։ Հեզութեամբ և հաւատով պէտք է աղօթեն Ամերիկացիք առ Հայրն ամենայն բարութեանց։ որ նա անսպառ անէ իւր խնամքը։ բարեգործութեամբ պէտք է ողորմութիւն որոնեն նոքա բոլոր բարեաց և պարգևների Տուողից։ Այսու ես Գրովէր Կլէվլէնդ։ նախագահս Միացեալ նահանգների։ նշանակումեմ 29 Նոյեմբերի իրրև օր աղօթից և գոհութեանց։ որ պիտի պահեն և սրբագործեն մեր երկրի բոլոր բնակիչները։ Այդ օրը թող դադարեն բոլոր սովորական աշխատանքներն և գործերը։ որ կարող լինինք Ամենակալ Աստուծուն գոհութիւն մատուցանել մեր ազգի պահպանութեան համար։ մեզ հիւանդութիւններից և ախտերից ազատ պահելու։ առատ հունձ պարգևելու։ ազգային բարօրութիւն պարգևելու և ամենատեսակ բարգաւաճումն ունենալու համար առաքինութեան և բանականութեան ճանապարհի վրայ։

Գոհութեան աղօթքին կցենք և մեր խնդրուածքը։ որ այս բարիքներն ամենն էլ բազմապատկուեն։ որպէս զի մեր ազգային խիղճը աւելի ևս զարթնի Աստուծոյ ամենակարողութիւնը և բարութիւնը ճանաչելու և մեր ազգային կեանքի մէջ աւելի ևս պարզ տեսնենք ճշմարտութեան և առաքինութեան ուղին։»

Ն. Ֆ.

ՊԱՏՄԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՍԻԼ ԵՆՈՎՔԱՅ ԱՐԴԱՐՈՅՆ։

Երևեցաւ ինձ այր մի յանդիման Լիբանան լերինն ի վեցերորդ ժամու աւուրն և տեսիլ նորա ի բոց հրոյ և ասէ ցիս։ ի միտ առ այր դու զոր պատմեմ քեզ զոր ինչ լուայ ի տեառնէ զօրութեանց և ես կացի զդիշերն ամենայն դէմ յանդիման լերինն յարևելից կողմանէ և երեսք իմ ի ծովն արևմտից յանդիման քրովբէին։ Եւ ահա ի վերայ ծովուն արծուի մի սաւս և բարձրաթռիչ Ը. թևք և Գ. գլուխք ի վերայ նորա։ և կայր ի վերայ ջուրց ծովուն և դիտէր ընդ հարաւ։ և ծովն փրփրայր ի հողմոյն հարաւոյ և կուտակէր զալիսն ընկղմել զարծուին և բախէին ալիքն զթևս նորա և ձայն ալեացն իրրև զձայն երիվարաց։ անցելոց ի կողմ արևելից հիւսիսոյ։ Եւ ահա գլուխ վիշապի և աչք նորա Թ. ոտք նորա իրրև զմագիլս առիւծու և վազք նորա իրրև ընձու։ Եւ հասանէր արծուոյն ի մէջ հողմոյն և ալեացն և ածեր զբերան իւր ի կլանել զնա։ Ճչէր արծուին առ բարձրեալն և ոչ լինէր լսելի աղաղակ նորա վասն որոյ բռնութեան իւրոյ։ Դարձուցանէր արծուին զերեսս իւր ի փախուստ ի վերջին հիւսիսոյ և ոչ լինէր նմա հանգիստանդ։ Եւ վիշապն կլանէր զազգս ամենայն և կիզոյր որպէս հրով և ոչինչ գտանէր յորովայնի նորա և տիրէր ի վերայ երկրի Զ. Ժ. իցս և Զ. որ լինի ՂԶ [1]) ամ և ի կատարածի ժամանակի նորա եղև դարձ արծուոյն ի նոյն տեղի սաստիկ զօրութեամբ ընդդէմ վիշապին ի հարաւային հողմոյն։ և կայր գլուխ վիշապին ի վերայ մոխրակոյտ հողոյ և կայր արծուին ի վերայ կառաց ճարմակ ձիոց և հասանէր առ վիշապն ի վերայ լերին մոխրակուտին։ և հարկանէր զվիշապն սաստկութեամբ և ոչ գտանէր զօրութիւն վիշապին իրրև զառաջինն։ և հոսէր զգլուխ վիշապին ընդ ազգս ամենայն։ և իջանէին ձիքն ճարմակքն ի մոխրակոյտն և հոսէին զնա։ և ելանէր փոշին և ցանէր ընդ երկինս և ոչ էր լու-

[1]) 6×16=99։

սաւորութիւն ի վերայ երկրի· այլ աղջամուղջ և մէգ անհնարին։ Եւ արք Զ. նստէին յաթոռս իւրաքանչիւր Գ.ն զազրատեսիլք և սեւք և երկուքն սպիտակք և գեղեցիկք և Զ. երորդն նեղեալ և սգաձեալ և գիւրեալ ի վերայ կանանց և որդւոց իւրոց և ամենեքին երկուցեալք ի վիշապէն որ կայր ի մոխրակուտին և ասէին հուր ելանէ ի վիշապէդ և այրէ զերկիր։ Եւ յետ այսորիկ աղաղակեաց քրովբէն և ասէ ցիս, այր դու առե՞ր ի միտ զտեսիլդ· և ասեմ ոչ. և ասէ ցիս, արի և լուր. և պատմեցից քեզ ամենայնի այգորիկ։

Արծուին տեսանէիր նորաթռիչ, որոյ էին թեւք Ը. և գլուխք Գ., նա է թագաւորն հոռոմոց և յունաց. և զի կայր ի վերայ ծովուն· կացցէ նա թագաւոր սաստիկ իբրև զերկաթ և որպէս վանէ արծուի զամենայն թռչունս և հարկեալ ընկենու յերկիր· նոյնպէս թագաւորն հոռոմայեցւոց սպառեսցէ զամենայն թագաւորութիւնս երկրի և որ սա վարմօք զօրութեամբ բարձրելոյն որպէս զթռչունս երկնից և ոչ ոք իցէ որ կարիցէ ընդդէմ կալ նմա և զի դիտէր ընդ հարաւ, առաւել զօրասցի ի վերայ հարաւային ազգին. և զի ծփայր ծովն վասն սաստիկ զօրութեամբ հողմոյն։ Եւ զի բախէին ալիքն զթեւս արծուոյն առ ի ընկղմել զնա, Ի ժամանակս յետինս յաւուրս թագաւորացն այնոցիկ յետ ՃԸ. յոբելինին, յարիցէ ազգն յետին հարաւու որդիքն Իսմայելի բնակեալքն ի ծովեզերին արաբիա. յարիցեն նոքա ի վերայ երկրի և կալցին զնա և մարտիցեն առ ափն ծովուն լուծանել զիշխանութիւնն հոռոմայեցւոց և ոչ կարիցեն զի տեղապահ մեծի արքային է. զի թէպէտ և լինի ի վերայ նորա յարուցմունք պատերազմաց և ալեկոծութիւնք չարեաց ընկղմել զնա ոչ կարեն, այլ խափանել փոխանորդէ զնա. թագաւորութիւնք անմահ բայց նուազեալ է վասն յանդիմանութեան մեղաց իւրոց և վասն լլկոյ մեղաց հարաւային ազգին։ Եւ ձայն ալեացն իբրև զձայն երիվարաց արշաւելոց. ի կողմանըս արևելից հիւսիսոյ և արևմտից. քանզի վանեսցին զմեծութիւնս ազգաց և մաշեսցեն որպէս հող երկրի և ոչ գոյ ուրախութիւն ի վերայ երկրի այլ ձայն լալոյ և աղաղակի և խռովութեան և զի բախէին ալիքն զթեւս արծուոյն հարցեն և վանեսցեն ազգն Իսմայելի զզօրս հոռոմայեցւոց և հիւսիսոյ այլ ոչ կարեսցին բառնալ ի միջոյ։ Եւ գլուխ վիշապին զի կայր ի վերայ մոխրակուտին, ի մէջ ալեացն և հողմոյն, և աչք նորա Թ. որ ոտք իւր իբրև զմագիլս առիծու և վազք իւր իբրև զընձու, նա ինքն է առաջին իշխանն ի վերայ ազգին Իսմայելի և զօրութիւն նորա իբրև զալիս ծովու յարուցեալ ի վերայ երկրի։ Եւ Թ. աչքն. և ոտքն իբրև զառիւծու. Թ. թագաւորք յարիցեն յետ նորա և կալցեն զերկիր և բեկցեն զնա որպէս զօրս առիւծուն։ Եւ զի հասանէր ի մէջ հողմոյն և ալեացն արծուոյն և ածեր զբերան իւր առ ի կլանել զնա, յարիցէ ի վերայ թագաւորին հոռոմայեցւոց. նեղիցէ զնա և առցէ զօրութիւն։ Եւ զի ճչէր արծուին առ բարձրեալն և ոչ լինէր լսելի· զի դարձաւ Աստուած ի նմանէ վասն անօրէնութեան նորա, և ոչ կարասցէ կալ ընդդէմ վիշապին, այլ եղիցի սիրտ նորա լքեալ և խորտակեալ յահէ երկիւղի և առցէ զիշխանութիւն նորա ծառայ նորա, որ ունի զանուն գաղտնի և կործանեսցէ զզօրութիւն նորա և նա զերծեալ փախիցէ ի վերջին հիւսիսոյ . . . . և առասցէ անդ դաշն խնամութեան ընդ իշխանին հիւսիսոյ և անուն թագաւորին բերջեա. և զի կլանէր վիշապն զազգս ամենայն և կիզոյր որպէս հրով և ոչ գտանէր յորովայնի նորա. յայնմ ժամանակի առաւել բորբոքեսցի սրտմտութիւն հարաւային ազգին ի վերայ երկրի, որպէս ուտէ հուր զամենայն նիւթ և մեղեալ վանէ և ոչ գոյ յագումն ի նա. նոյնպէս և նա նեղեալ ընչասիրութեամբ ոչ լցցի· այլ ապականեսցէ զերկիր. սրով և հրով և գերութեամբ մինչև ի կատարել մեղաց. և լնուլ անօրէնութեան իւրեանց. ԵՆ ամք Դ.Զ., Ապա եղև դարձ արծուոյն, ի հիւսիսոյ գալ ունել զնոյն տեղի սաստիկ զօրութեամբ ընդդէմ վիշապին, հրամանաւ բարձրելոյն, որք և յարեան ի վերայ նորա. սատակեսցին յերեսաց նորա, և զի կայր գլուխ վիշապին ի վերայ մոխրակոյտ հողոյն, քանզի սնոտի է զօրութիւն նորա։ և արհամարհեալ է իշխանութիւն նորա· զի յուսացաւ ի մեծութիւն գանձուց և ոչ յաստուած. և արծուին կայր ի վերայ Ճ ա ր մ ա կ ձիոց և հասանէր առ վիշապն. եկեսցէ նա ի վերայ իշխանին հարաւոյ սաստիկ զօրութեամբ հիւսիսային ազգաւ և ամենայն ժողովրդովք մնացորդաց. և հարցէ զնա անհնարին հարուածովք, և ոչ գտցի զօրութիւն ի վիշապն իբրև զառաջինն, այլ լքեալ պարտեսցի յերեսաց թագաւորին հիւսիսոյ, որպէս եղէգն առաջի հրոյ և որպէս մոխիր հնոցի առաջի հողմոյն հիւսիսոյ և զի հոսեր զգլուխ վիշապին ընդ ազգս ամենայն. Սրով և հրով և գերութեամբ վատնեսցէ զնոսա և ոչ ողորմեսցի կանանց և մանկանց նոցա մինչև սատակեալ սպառեսցին և լցցի սրտմտութիւն տեառն ի նոսա զի յանխնայ կոտորեաց զժողովուրդն աստուծոյ. վասն այնորիկ կրկին հասին նմա չարիք իւր, և նեղեսցի նա ի սով և ի ծարաւ և ի մերկութիւն և ով գտցէ մխիթարութիւն և այրեսցի մարմին նորա յարեգակնէ և ոչ գտցէ ծածկոյթ մերկութեան, ի բազում կարօտու-

տեան իւրմէ՝ այլ մորթով խաչանց ծածկեսցէ զմերկութիւն իւր՝ և զի իջանէին ձիքն ճարմակք ի մեխակոյտն և հոսէին զնա և ելանէր փոշին և ցանէր ընդ երկինս՝ այլ են զօրքն հռոմոց՝ իբրև զձիս ի կառս զայրագնեալք՝ հոսեսցին զմեծութիւն ազգին հարաւոյ ընդ ամենայն ժնացորդս ազգաց իբրև զմոխիր հնոցի սփռեսցին ընդ երկիր՝ Եւ զի բարձրացեալ փոշին ցանէր ընդ երկինս՝ այն է ծուխ անօրէն դառնութեամբ ազգին հարաւոյ և զի ի ձեռն վրէժխնդրութեան Նոյա լինելոց է կատարած ամենայն աշխարհի՝ Եւ զի ոչ գոյր լուսաւորութիւն ի վերայ երկրի՝ այլ աղջամուղջ՝ այն են գործք ամբարշտութեան Նոցա որ արգելուն զողորմութիւն Աստուծոյ յարարածոցս՝ որ լուսաւորէ և մխիթարէ զխորտակեալս սրտիւք՝ իբրև զլոյս առաւօտոյ և զցօղ ի վերայ երկրի ի զուարճութիւն բուսոց՝ Եւ զի Նոստէին արք Զ. յաթոռ իւրաքանչիւր՝ Գ. Ն զազիրք և սեք Նոյն ինքն է ժամանակ ազգին հարաւոյ՝ Գ. տանուտեարք Գ. Լ. որ լինի Ղ. ամ և այլև ես ամք Զ. իշխանութեան Նորա՝ որ լինի Նեղութիւնք ի վերայ Նեղութեանց՝ անբերութիւնք անդաստանաց՝ նուազութիւնք աղբերաց՝ երաշտութիւնք երկրի՝ անպտղաբերութիւնք անկոց՝ գօսումն անտառաց՝ անկումն մայրից խամրումն ծաղկանց՝ բորբոքումն և տոչորումն հրոյ՝ ցնդումն օդոց՝ մահ թռչնոց՝ պակասումն ձկանց՝ կործանումն անասնոց և երէոց և անբերութիւնք անձրևի և զեն քգեման և կարկտի՝ մարդկան անծնելութիւն և ամլութիւն և կարճակեցութիւն և ամենայն իրաց պակասութիւն՝ քանզի ծերացաւ երկիր ի չարեաց մարդկան և եկաց ի ծննդոց իւրոց՝ վասն զի ոչ արարին բնակիչք Նորա պտուղ կենաց՝ վասն այսորիկ ոչ յղացի Նա ի զօրութիւն սերմանց իւրոց և ոչ բացցի արգանդ Նորա ի բոյսս պտղոց՝ այլ Նեխութիւն և աղտեղութիւն գացի ի Նմա՝ Հրահոսութիւնք երկնիք և ապականութիւնք ի ծովու և ի ցամաքի՝ իսկ յետ անցանելոյ իշխանութեանն հարաւոյ և լնուլ բարկութեան սրտմտութեան Տեառն ի Նոսա յետ այնորիկ զի Նոստէին արք Բ. սպիտակք և գեղեցիկք և կարմիրք և բարեսեսիլք՝ այն են զի յորժամ սպառեսցին հռոմայեցիք զազգն հարաւոյ՝ զառաջին պատերազմն հարցին ի ծովու և հողմ ի Տեառնէ յարուցեալ ընկղմեսցէ զնոսա և թագաւորն զօրասցի յԱստուած և նուիրեսցէ Աստուծոյ զյաղթութիւնն և դարձեալ հարցէ զնոսա Զ. իցս ի ցամաքի զմնացեալսն հալածեսցէ յաշխարհ բնակութեան իւրեանց և զկանայս և զորդիս Նոցա գերեսցին յելլագա և ի սիկիլիա՝ և արասցէ խաղաղութիւն հրամանաւ բարձրելոյն՝ և կացցէ ինքն յետ այնորիկ ամս ԲԺ. և փոխեսցէ զկեանս իւր խաղաղութեամբ՝ Եւ ապա յետ Նորա յարիցէ միւս ևս թագաւոր խաղաղական՝ և անուն Նորա փոուվիվ որ թարգմանի Տիրէր և տիրեսցէ նա ամս ԼԳ այս ե-Բ. տանուտեարքն սպիտակք և գեղեցիկք՝ զի յաւուրս սոցա եղիցի խաղաղութիւն և լիութիւն մոռացումն ամենայն չարեաց և Նեղութեանց առաջնոց՝ քաջաբերութիւնք անդաստանաց՝ լիութիւն պտղոց՝ կալս և հնձանի՝ յայնժամ տացէ երկիր զզօրութիւն իւր՝ յուրախութիւն մարդկան՝ իբրև զառաջինն՝ անդաստանք յորդեսցին ցորենով և գինով՝ և տացեն երկինք անձրևս շաբեկանս՝ և ոչ եղիցի կարկուտ և հրահոսութիւն և ցնդմունք աւդոց՝ այլ արասցէ հատ մի ցորենո ճ. հասկ՝ և տաշտ մի այդոյ Ռ. ողկոյզ՝ և եղիցին ի լերինս տունկք որբոց քաջուղեղք և պտղաւէտք և պարարտասցին ձիթենիք՝ Է. պատիկ յուրախութիւն մարդկան՝ և հանգիցեն մարդիկ և մոռասցին զնեղութիւնս զառաջինս՝ Յայնժամ երևեսցի նշանաւոր աստղ՝ զարևմտից կողմամբն ունելով գեսս որ նշանակ է առաւել խաղաղութիւն զկողմամբն զայնոքաւք լինել՝ և եղիցի հաւաքումն հրէից ազգին՝ զմիջագետաւք և զկողմամբն Պաղեստինա և քաղաքն դամասկեա լքեալ եղիցի ի բնակչաց և հանգըրուանք երէոց և գազանաց կացցէ՝ Եւ այրն Զ. երորդ սգացեալ ի վերայ կանանց և որդոց՝ նա է կատարած ժամանակի կենաց աշխարհի՝ Քանզի յետ մահուան խաղաղական թագաւորին որ անունն Տիրեր է՝ յարիցէ թագաւորի նուաստ ազգէ և անուն Նորա հրձիք և իշխանութիւն Նորա արհամարհեալ և կալցէ ամս երիս՝ յայնմ ամի խառնակեսցի թագաւորին ի Ժ թագաւորի բաժանեսցի՝ Քանզի յորժամ հարցէ արքայն հիւսիսոյ զազգն հարաւային և գերեսցէ զնոսա՝ ընդ նոսա դարցէ և զանաւրէն իշխանն գերի հգն՝ մարրն իւրով՝ մանուկ ամաց ծնելի քաղաքին բիշանա և անուն Նորա՝ ումդ՝ Երգիցէ ի բիւզանդիոն և կացցէ անդ ամս Լ՝ և ուսցի անդ փիլիսոփայական արհեստ ի հելլենս՝ և ի Նոյն առաւելեալ քան զամենեսին՝ ընկալցի պատիւ ի թագաւորացն՝ Քանզի զաւրավար եղեալ կատարեսցէ ստութիւն ի պատերազմի և առցէ պատիւ ի թագաւորէն՝ յետ այսորիկ ի Ժ՝ բաժանեսցի թագաւորութիւնն՝ և յայնմ հետէ ոչ դադարեսցին տիեզերք յալեկոծութենէ պատերազմաց և եղիցի սով յերկրի ԶԵ՝ ամ և արգելցին երկինք զանձրև և ոչ տացէ երկիր զպտուղ իւր՝ Նուազեսցին դեսք և հոտեսցի ծով՝ և սատակեսցին գազանք և անասունք՝ և անկցին մարդիկ և մեռցին ի մէջ քաղաքաց՝ և ոչ որ իցէ որ թաղիցէ՝ արհամարհեսցի ոսկի և արծաթ և ոչ

րք իցէ որ ժողովիցէ զնոսա· արհամարհեսցի զեղեցկութիւն կանանց· այս է ժամանակ տանուտեառնն Զ· երորդի· որ օգացեալ էր ի վերայ կանանց և որդոց· և որ երկուցեալք սուէին· Հուր ելանէ ի վիշապէդ և այրէ զամենայն երկիր զի յետ մահուան Թագաւորին· որո անուն Հրձիք է· խառնակեսցի Թագաւորին և բաժանեսցի ի Ժ· ի միում ամսեան· և զկնի ԱԾ· երորդ Թագաւորեսցէ ապըստամբն և զաւրացի ի վերա Ժ· Թագաւորացն· և հարցէ Զ· կրկին ի Նոցանէ և քակեալ կործանեսցէ զիշխանութիւն Ժ· անցն, և առեալ յինքն ըզ· թագաւորութիւնն խաղաղացէ ի վերայ Պաղեստինի և ի վերա իշխանութեան որդոցն Իսմայելի, և դարձեալ յաղթութեամբ և բազում աւգնականաւք Հարաւային ազգին ի վերա Պաղեստինա, Եկեսցէ և հարցէ զնա· և բորբոքեսցի սրտմտութիւն նորա որպէս աւձի ընդամենայն երկիր, ապա անւանեսցէ զանձն իւր աստուած· և խաւսեսցի ամբարհաւանութիւն առաջի բարձրելոյն, և երկիր պագցեն նմա ամենայն անաւրէնք· Այն է հուրն որ ելանէր ի վիշապէն և այրէր զերկիր· զի ոչ գտանի յայնժամ արդարութիւն ի մարդիկ, այլ լիցին ամենեքին որպէս փուշք ի կիզնուլ· յանաւրէնութիւնից իւրաքանչիւր· ընդ նմին վառեալ բորբոքեսցի վրէժխնդրութիւնք ի մարդիկ· սովք և սուրք և հրկիզութիւնք, սուտ նշանք և արեւստք· որովք զարհուրեցուցանէ զերկրպագուսն ուր և չարչարանաւք կատարեսցէ զսուրբս բարձրելոյն, որք ոչ համարեցան նմա պաշտաւն տալ իբրև աստուծոյ, և լինի ողորմութիւն բարձրելոյն ի վերա երկիւղածաց իւրոց· և որչափ առաւելեալ չարչարեսցին ևս առաւել պայծառասցին, իբրև զդրախտք պայծառացեալք կենդանի ջրովք և ծաղկեալք, ոմանք սպիտակք, ոմանք կարմիրք, ոմանք ծիրանիք, կատարեալք պէս տանջանաւք և չարչարանաւք, և են աւուրք իշխանութեան ապստամբին ՌՄԿԵ, Յետ այնորիկ ապա յարիցէ թագաւոր բարեպաշտ ի Հռոմ և ժողովեսցին առ նա ամենայն մնացորդք յուխտէն աստուծոյ· և յարուցեալ խաղացէ և եկեսցէ ի վերայ ապստամբին և զաւրաց նորա· և խնդրիցէ Տէր ինքնին վրէժ ի նմանէ, Քանզի հուր ի Տեառնէ իջեալ սատակեսցէ զնա և զզաւրս նորա· և զամենայն մեղաւորս կերիցէ, և ոչ մերձեսցի հուրն ապականել զծառայս բարձրելոյն· և շրջիցին ի հուրն իբրև ի մէջ սաստիկ անձրևաց· և կերիցէ ԶԷ· աւր զամենայն երկիր, ապականեալ ի չարեաց մարդկան· կիզցէ զլերինս և զբլուրս· և հալեսցէ զքարինս· և ցամաքեցուսցէ զաղբիւրս և զգետս· և ծախեսցէ զամենայն ինչ մինչև ի ապառ· և յետ Է· աւուրն երևեսցի նշան փայտին իբրև զլոյս Թափանցիկ յարևելից կողմանէ, յաւուր ուրբաթու յերորդ ժամու, և կայցէ աւուրս Բ. և յաւուրն երորդի ընդ այգն ընդ առաւաւտն· Եկեսցէ Տէր սըրբովք հրեշտակաւք իւրովք· հաստուցանել որոց իւրոց և յանդիմանել զամբարիշտս երկրի· հարցեն փող հրեշտակապետքն երիցս անգամ· և յարեսցին ամենայն ազգք մարդկան յանդիման լինել առաջի Տեառըն յայնժամ զապստամբն կապեալ և զզաւրս նորա, և որք երկիր պագանէին նմա և կուոց պասկերաց· և տարցին նիւթ անշէջ հրոյն· և անքուն որդանն, ի տարտարոսն Եփեստոսի ի կողմանս արևմտից հարաւս յովկեանոս ծովուն և փառեալ ծծըմբով և ձիւթով այրեսցին զամենայն մեղաւորս և ոչ շիջանեսցին· յայնժամ ամենայն սուրբք ընդ հըրեշտակս կացցին հանապազ առաջի բարձրելոյն Աստուծոյ թագաւորեալք և ուրախացեալք փառաւորելով զԱստուած յաւիտեանս յաւիտենից· զթա Քրիստոս ի Տէր ՄԽ ՎՐԴ·Ն,

ԱՅԴ ՏԵՍԻԼԸ արձանագրուած է Ս. Էջմիածնի մատենադարանի նոյն թիւ 924 ձեռագրից, որ Հայր Զարբհանալեան իւր «Հայկական Թարգմանութիւնք նախնեաց» գրքի մէջ եր. 189 յիշում է։ Ինչպէս սկսուածքից երևում է, սա նոյնն է, ինչ որ Երուսաղեմի գրատան մէջ գտնուածը։ Մեր ձեռագրի մէջ նա գալիս է Գ. Մակարայեցւոց գրքից յետոյ և «Կտակք ԺԲ Նահապետաց», «Պատմութիւն Ասենեթա» անվաւերական գրուածքներից առաջ։ Վերնագրի մօտ լուսանցքում գրած է, «զՄարգիս յիշէ», իսկ ստորև «զՊ. Մակարայեցիսն ոչ գտի և ոչ զՅովսէպոսն, որ գրել էի ի գիրս»։ Կարելի չեղաւ առ այժմ մի ուրիշ օրինակ գտնել, որպէս զի մեր ունեցած այս օրինակը համեմատելով և ճշգելով ի լոյս ընծայէինք, այլ գրուածը նոյնութեամբ արտատպելով՝ կամեցանք կանխօրէն լրացնել Վենետիկի Մխիթարեան մի նոր ձեռնարկութեան թերին, որոնք ինչպէս իրենցից տեղեկացել ենք, արդէն պատրաստ ունին և շուտով պիտի հրատարակեն հայերէն թարգմանութեամբ մեզ հասած հին և Նոր Կտակարանի բոլոր անվաւերական գրութիւնները, բայց «Ենովքի Տեսիլը» չունին իրենց ձեռագրատանը։ Յարաբերաբար այդ գրուածքը չունի ամենևին այն արժէքը, որ նորա վերնագի-

ըը խոստանում էր․ նա ոչ Խորենացու յիշածը կարող է լինել և ոչ էլ «Ենովքայ գիրք» անունով յայտնի անվաւեր գրութեան հետ, ինչպէս երևում է, որ և է կապ ունի։ Վերջինս հրէական ծագումն ունի և գրուել է հաւանականօրէն Քրիստոսից առաջ և յիշուած է արդէն Յուդայի թղթի մէջ (համ․ 14)։

Մեր դարում յայտնուել է այդ գրքի եթովպերէն թարգմանութիւնը միայն (գերմաներէնի փոխադրուած և հրատարակուած Բեռլինի ուսուցչապետ Դիլլմանի ձեռքով) և այս թարգմանութիւնը բովանդակում է իւր մէջ հրեշտակների մի մասի անկման պատմութիւնը, հրեշտակների միջոցով երկնքի, երկրի, դժոխքի, արքայութեան գաղտնիքների մասին, տրուած յայտնութիւններ են։ Այդ գրուածքի հետ մեր տեսիլը համեմատելու միջոց չունինք, բայց վերջինիս բովանդակութիւնը յայտնի վկայում է, որ խաչակրաց արշաւանքից առաջ գրուած լինել նա չէ կարող։ Նոյնպիսի մի գործ է նա, գրէթէ նոյն արժէքն ունի, ինչ որ Դանիէլ մարգարէի մեր ձեռագիրներում պահուած անվաւերական Տեսիլը, միայն թէ սորա ծագումը հայկական է, իսկ առաջինը հաւանականօրէն օտար աղբիւրից է առնուած։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ․

Խմբագրութիւնս ստացել է Ս. Էջմիածնի միաբանութեան աւագոյն անդամ բարձր սրբազան Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանցից հետևեալ նամակը, որի մէջ երկու հնագիտական գիւտերի մասին է աւետում։

Հայկական բևեռագրութեան հետազօտողների նահապետն է սրբազան Մեսրոպ Արքեպիսկոպոսը, որ մինչև այժմ էլ չէ դադարում արձանագրութիւնների հետախուզութիւնից։ Աչքի առաջ ունենալով այն հետաքրքրութիւնը, որ այժմ կայ հայկական կամ Վանեան կոչուած բևեռագրութեան համար, շտապեցինք այդ մասին աւետելու, մի այլ անգամուան թողնելով այդ արձանագրութեան ճշգրտապատկերն հրատարակելը։

Երկրորդ գիւտը նոյնպէս իւր նշանակութիւնն ունի, քանի որ մինչև այսօր միւսէոնի (mosaïque) հետքեր դեռ չեն գտնուած Հայաստանի աւերակների մէջ, թէպէտ և պէտք է ստուգապէս ենթադրել, որ՝ բիւզանդական ճարտարապետութեան հետ [illegible] ևս մուտք պիտի գործած լինի Հայաստան Բագրատունեաց շրջանում։

Նորագիւտ միւսէոնի նկարը Նորին Սրբազնութիւնը ուղարկել է Մոսկուայի հնագիտական ընկերութեան, որ երևի լոյս կընծայէ այդ իւր հրատարակութիւնների մէջ։

Ահաւասիկ Նորին բարձր Սրբազնութեան նամակը․

Բազմաշնորհ Խմբագրութեան Արարատ ամսագրի․

Ազգիս Վեհափառ Հայրապետի բանաւոր հրամանով նոյեմբեր ամսի սկզբներումն ուղարկուած լինելով Իգդիր եկեղեցի օծելու և քահանայ ձեռնադրելու, օգուտ քաղեցի առթից և պաշտօնական գործերս աւարտելուց յետոյ մի փոքրիկ հնագիտական արշաւանք գործեցի դէպի Ցօղակերտ և Արմաւիր։

Ուղեկիցներս էին Ս. Էջմիածնի միաբաններից արժանապատիւ Հմայեակ վարդապետ Արշարունին, բարեշնորհ Բագրատ վ. Թաւաքալեանն ու շրջակայ գիւղերի քահանաներից ոմանք։

Այժմեան Դաշբուռուն գիւղում, որ հին Ցօղակերտի տեղն է, իմացանք, որ այդ տեղից մի վերստ հեռու, դէպի արևելք, արքունի պողոտայի վրայ անցեալ տարի բացուել է մի հին եկեղեցու հիմք։ Նախ փութացինք